

# ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

## Հ Ո Գ Ե Գ Ա Լ Ո Ւ Ս Տ

Եւ ի կատարել աւուրցն Պենտեկոստէից էին ամենեքեան ի միասին։ Եւ եղեւ յանկարծակի հնչիւն յերկնից՝ եկեալ իբրեւ սաստիկ հողմոյ, եւ ելից զամենայն տունն յորում նստէին։ Եւ երեւեցան նոցա բաժանեալ լեզուք իբրեւ ի հրոյ, եւ նստաւ իւրաքանչիւր ի վերայ նոցա։ Եւ լցան ամենեքեան Հոգւով Սրբով, եւ սկսան խօսել յայլ լեզուս որպէս եւ Հոգին տայր բարբառել նոցա։ Եւ էին յԵրուսաղէմ բնակեալ Հրեայք, արք երկիւղածք, յամենայն ազգաց որ ի ներքոյ երկնից։ Եւ իբրեւ եղեւ բարբառս այս, եկն միաբան բազմութիւնն եւ խռնեցաւ, զի լսէին յիւրաքանչիւր լեզուս խօսել նոցա։ Սքանչանային ամենեքեան եւ զարմանային եւ ասէին ընդ միմեանս. Ո՞չ աւասիկ ամենեքեան սոքա որք խօսինս՝ Գալիլեացիք են. Եւ զիա՞րդ լսեմք մեք յիւրաքանչիւր բարբառս մեր յորում ծնեալ եմք. Պարթեւք եւ Մարք եւ Իղամացիք եւ որ բնակեալ են ի Միջագետս, ի Հրէաստանի եւ ի Գամիրս, ի Պոնտոս եւ յԱսիա, ի Փռիւգիա եւ ի Պամփիւլիա, յԵգիպտոս եւ ի կողմանս Լիբէացւոց որ ընդ Կիւրենացիս եւ որ եկք Հռովմայեցիք, Հրեայք եւ եկք նոցուն, Կրետացիք եւ Արաբացիք, լսեմք խօսից նոցա ի մեր լեզուս զմեծամեծս Աստուծոյ։ Սքանչանային ամենեքեան զարմացեալք, եւ ասէին ցմիմեանս, Զի՞նչ կամիցի այս լինել։ Եւ կիսոցն ընդ խաղ արկեալ ասէին թէ Քաղցուալից իցեն։

Յարուցեալ Պետրոս հանդերձ մետասանիւքն՝ ամբարձ զձայն իւր եւ խօսեցաւ ընդ նոսա, Արք Հրէաստանեայք եւ որ բնակեալ էք յԵրուսաղէմ, ամենեքին, այս ձեզ յայտնի լիցի, եւ ունկն դիք բանից իմոց. Ոչ որպէս դուք կարծէք թէ սոքա արբեալ իցեն, զի դեռ երեք ժամք են աւուրս։ Այլ այս է որ ասացաւ ի ձեռն մարգարէին Յովելայ. Եւ եղիցի յետ այսորիկ յաւուրս յետինս, ասէ Աստուած, հեղից յՈգւոյ իմմէ ի վերայ ամենայն մարմնոյ, եւ մարգարէասցին ուստերք ձեր եւ դստերք ձեր, եւ երիտասարդք ձեր երազովք յերազեսցին։ Եւ ի վերայ ծառայից իմոց եւ ի վերայ աղախնանց իմոց յաւուրսն յայնոսիկ հեղից յՈգւոյ իմմէ, եւ մարգարէասցին։ Եւ տաց նշանս յերկինս ի վեր, եւ նշանս յերկիր ի խոնարհ՝ արիւն եւ հուր եւ մրրիկ ծխոյ։ Արեգակն դարձցի ի խաւար, եւ լուսին՝ յարիւն, մինչչեւ եկեալ իցէ օր Տեառն մեծ եւ երեւելի։ Եւ եղիցի ամենայն որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ։

(ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ, Բ 1—21)